



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

of the year of the

891.99

U-27

6 NOV 2011

ENUS VOL 43

8891.99

Կ- 27

12

ԼԵՒՈՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆ

# Դ Է Պ Ի Վ Ե Ր

ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ՊՕԷՄԱ



Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳ,  
«ՊՈՒՇԿԻՆԵԱՆ ԱՐԱԳԱՏԻՊ» ՏԳԱՐԱՆ  
1902

24 JUN 2013

41938

Дозволено цензурою. С.-Петербургъ, 3 Мая 1902 года.

# Դ Է Պ Ի Վ Ե Ր

Դրամատիկական պոէմա:

Super Massis nullus debet  
ascendere, quia est mater  
mundi. (Rubruquis).

(Ոչ որ չգիտի բարձրանայ  
Մասիսի գլուխը, որովհետև  
մայրն է աշխարհի):

2462

## Մ Ի Ք Ա Ն Ի Խ Օ Ս Ք Պ Օ Է Մ Ա Յ Ի Ա Ռ Ի Թ Ո Վ

Մասիսը ամենագեղեցիկը և վսեմագոյնն է բո-  
լոր լեռներից, ինչպէս այդ վկայում են եւրոպացի  
ճանապարհորդները: «Ոչինչ չէ կարող լինել աւելի  
ղեղեցիկ, քան նրա դադաթը, և առաւել ահաւոր,  
քան նրա բարձրութիւնը. ամենայն ինչ ներդաշնա-  
կաւոր է, և բոլորը միացած՝ այդ սարը դարձնելու  
բնութեան ամենավսեմ առարկաներից մէկը»:  
(Morier). Եւ չգիտեմ ոչինչ աւելի վսեմ, քան այդ  
զանգուածի վիթխարի և տակաւին շնորհագեղ տե-  
սիլը, երբ նշմարում ես շրջակայ դաշտերից: (James

«Пушкинская Скоропечатня», Лешуковъ, 4.

Bryce). «Ա՛նհնար է նկարագրել նրա տեսքի վսեմութիւնը երկու հանդամանքների մէջ ևս՝ թէ փոթորիկի և թէ խաղաղութեան ժամին»։ (It is impossible to describe the sublimety of its aspects under both circumstances of storms and peace).— K. Porter).

Ահա այս սարի վրայ է կատարուում այն ամենը, ինչ որ նկարագրւած է ներկայ երկասիրութեան մէջ։ Խսկ սրա նիւթը ուրիշ բան չէ, եթէ ոչ ուսուցչապետ Պարբոտի և մեր Աբովեանի համարձակ վերելքը \*) զէպի Մասիսի դագաթը, որը մինչև այդ համարուում էր անմատչելի մահկանացուների համար։

Այս վերելքը միննոյն ժամանակ մի տեսակ խորհրդաւոր և կարծես ճակատագրական նշանակութիւն է ստանում մեր աչքում, շնորհիւ այն հանդամանքի, որ պրօֆեսոր Պարբոտը, այդ մարդասէր և լուսամիտ ուսումնականը, շփուելով Աբովեանի հետ, որը հազիւ 24 տարեկան էր, իր սեփական օրինակով վառեց նրա մէջ գիտութեան տենչը և մի բռնոն, անդիմադրելի ձգտում զէպի կատարելութիւն։

Յայտնի է, որ ուսումնաճարաւ երիտասարդը, շնորհիւ նոյն այդ գիտնականի հոգացողութեան, կարողացաւ հասնել իր փափագին, յաղթելով բազմաթիւ խոչնդոտների և դժւարութեանց. և՛ Վարպատի համալսարանում 5—6 տարի մնալուց յետոյ, վերադարձաւ հայրենիք՝ խօսքով և գործով ծառայի-

լու իր ժողովուրդին, որի ցաւերը ողբաց նա մի կըսկծալի ողբով և ազատելով նրա մտածողութիւնը հին, սխողաստիկական դպրութեան գերութիւնից, պատրաստեց նրա համար մտաւոր վերածնութեան նոր ճանապարհը։

\*) 1829 թ.

ՊՕԷՄԱՅԻ ԱՆՉԻՆՔ

Ս. ՅԱԿՈՎԲԱՅ ՎԱՆԱՅԱՅՐԸ (Կարապետ վ.):  
ՖՐԻԴՐԻԽ ՊԱՐՐՕՏ, Դորպատի համալսարանի  
ուսուցչապետը:

ԿԱՐԼ ՇԻՄԱՆ }  
ՄԱԿՍԻՄ ԲԵՏԱԳԷԼ } ուսանողներ:

ՖԷՈԳՈՐՈՎ, աստղաբաշխ:

Երկու ուրիշ օտարերկրացի ճանապարհորդներ:

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎԵԱՆ:

ԳԻԻՂԱՅԻՆԵՐ (Ահոսի գիւղեց):

ՎԱՆՔԻ ՀՈՎԻԻԸ:

ՏԵՍԱՐԱՆ Ա.

Ս. Յակովբայ վանքը Մասիսի ստորոտում, շրջապատւած  
ձառերով: Աչքի առջև է լերան վերամբարձ ծիւ-  
նազագաթը: Վանահայրը կոացած աշխատում է մի վէ-  
մի վրայ: Երևում է Արովեանը՝ դէմքին լոգնութիւն, բայց  
ինքն ուրախ:

ՎԱՆԱՅԱՅՐ, ԱԲՈՎԵԱՆ:

Աբովեան. Աստուած օգնական!

Վանահայր. Աստուած պահապան!

Աբովեան. Հայր սուրբ, հեռաւոր աշխար-  
հից ձեզ մօտ

Մի քանի օտար հիւրեր են գալիս.

Խընդրում եմ'նրբանց սիրով ընդունէք

Եւ յատկացրնէք իջևանելու

Յարմար սենեակներ:

Վանահայր. Դըռները բաց են. համեցէ՛ք  
Թող գան.

Սենեակներ ունինք, և մեր ուժի չափ

Կը հիւրասիրենք: Եթէ ուրիշ բան

Ձը լինի, դոնէ, Տիրոջ տրւածից,

Սեր ու կարագը առատ կը լինի  
 չայի վանքերում: Ուրախ եմ, թող զան:  
 Աբովեան. Սյդ ինչ է, հայր սուրբ? փորում  
 էք քարը,

Տաշում և յըզկում: Սյդ ինչ էք շինում?  
 Վանահայր. Իմ դերեզմանը \*):

Աբովեան. Ձեր դերեզմանը?

Վանահայր. Սյո, եղջյորըս, իմ դերեզմանը:

Յաւառենական իմ կացարանը

Ես կամենում եմ իմ ձեռքով շինելը

Որ կայուն մընայ: Եթէ շիրիմըս

հողակոյտ լինի, նա չի դիմանայ:

Սնձրեր, ձիւնը և հեղեղները

Կարող են իսպառ բընաջինջ անել

Իմ վերջին հետքը և յիշատակը:

Իսկ այսպէս լաւ է: Սնփուտ, քարակոփ

Գերեզմանի մէջ կը հանդէս խաղաղ

Ես մինչև վերջին անկող դատաստան:

Աբովեան. Կը մեռնենք, հայր սուրբ, և մեզ  
 կը թաղեն:

Քրիստոնեաներ ենք, գայլի և անգղի  
 Բաժին չենք դառնալ: Ինչ հարկ ուրեմըն

Սյդ մասին այդչափ հեռու մըտածել?

Աւելի լաւ չէ՞ անձնատուր լինել

\*) Սյդ մասին վկայում են ականատեսները:

Վեանքի հողսերին և կեանքի համար

Միմիայն արքնել?

Վանահայր. Բայց իմ հասակում պատշաճ  
 է, կարծեմ,

Խորհել սակաւիկ նաև հանդերձեալ

Մեր կենաց մասին... Հա՛, այժմ երթամ

Եւ հըրամայեմ ծառային սրբել

Եւ կարգի բերել վանքի խրջերը:

Աբովեան. Գընանք միասին:

(Վանահայրը և Վրովեանը մտնում են վանքի գաւթիքը: Լքեում են ուսուցչապետ Պարթոս, Շիման, Լեհագէլ և երկու ուրիշ տուրիստներ. յետոյ ակոռեցի զեղջուկներ և մի քանի պահապաններ):

ՊԱՐԹՕՏ, ՇԻՄԱՆ, ԲԵՀՍԳԻԷԼ և միւսները:

Պարթոս. Ահա աշխարհի այն սուրբ անկիւնը,

Ուր վերածընւած մարդկութեան ձայնը

Առաջին անգամ օրհնեց Արարչին

Ամենակործան ջըրհեղեղից յետ:

Շիման. Սիրուն տեսարան!

Բեհագէլ. Որքան վեհութիւն երկընքին  
 հասած

Սյս բարձրութեան մէջ!

Պարթոս. Ի՛նչ մեծախորհուրդ աւանդու-  
 թիւններ

Կապւած են բոլոր այս վայրերի հետ.

Ինչ որ անսկզբին երկիւղածութեամբ  
 Լրցուում է սիրտըս: Իսկ Սրարատը...  
 Նայեցէք վերև—ի՛նչ գեղեցիկութիւն,  
 Ի՛նչ ըսքանչելիք! Ամբողջ աշխարհում  
 Կը լինի արդեօք աւելի վըսեմ,  
 Աւելի վե՛հ լեառ? Իրաւ, ըզմայլել  
 Սյս տեսարանով—սա էլ մի ուրոյն  
 Երջանկութիւն է: Եւ ինչեր, ինչեր  
 Ձէ տեսել կեանքում այս պատկառելի,  
 Ալեզարդ հըսկան!... Սյստեղ էր զբրախս,  
 Ըստ աւանդութեան, առաջին մարդկանց  
 Սյն երանաւէտ բընակատեղին.  
 Եւ այստեղ էր, որ առաջին անգամ  
 Եղբայր եղբօր դէմ նստանձով վառւած՝  
 Գործեց ժանտ ոճիրն արիւնհեղութեան:—  
 Սյն դաշտավայրը, որ անշուշտ մի օր  
 Եգեմի վայել սիրուն տեսք ունէր,  
 Խուժադուժ, վայրագ բարբարոսներից  
 Քանի՛ցս անգամ ոսնակոխ եղած՝  
 Աւերւել, քանդւել, ամայացել է—  
 Եւ բընիկների շինարար ձեռքով  
 Կըրկին կանաչել, կըրկին շէնացել...  
 (Կալիս են վանհայրը և Մբովեանը):

Պարբօտ. Ողջոյն ձեզ, հայր սուրբ:  
 Վանահայր. Ձեր դայլը բարի, իմ ուսումնական  
 Պատուելի հիւրեր:

Պարբօտ. Մեր խումբը մեծ է, բայց և մեծայոյս,

Որ մեզ բոլորիս դուք սիրողաբար  
 Կը պատըսպարէք այս մենաստանում  
 Քանի մի օրւայ կեցութեան համար:

Վանահայր. Իմ աջիս վըրայ այստեղ բոլորք

Ունիք ապահով ապաստան: Խընդրեմ,  
 Ներս հրամայէք և հանդրատանաք:

Պարբօտ (Մբովեանին). Առաջ թօղ տանեն  
 Իրեղէնները

Եւ տեղաւորեն: (Կիւղացիները ներս են տանում իրերը):

Իսկ մենք մի փոքրր կը հանդրատանանք  
 Սյստեղ, հրաշափառ լերան դէմ առ դէմ:

Վանահայր. Անշուշտ առաջին անգամն է,  
 որ դուք

Շընորհ էք բերում մեր այս երկիրը?

Պարբօտ. Առաջին անգամ:  
 Վանահայր. Թոյլ տըւէք նոյնպէս ձերիս

Իմանար  
 Ո՞ր երկրից էք դուք, և ի՞նչով արգեօք

Մեր մենաստանը, այս խուլ անկիւնը,  
 Արժանացաւ ձեր ուշադրութեան?

Պարբօտ. Գորպատից ենք մենք, հայր սուրբ:  
 Երևի,

Լրսած կը լինիք դուք այս անունը?  
 Մենք բոլորեքեան—գիտութեան խոնարհ  
 Ծառայողներ ենք: Մեզանից մէկը  
 Ուսուցչապետ է, միւսը ուսանող,  
 Մի երրորդըն էլ—աստղաբաշխ... Այսպէս  
 Բարեկամական մի խումբ կազմեցինք  
 Եւ հռու տեղեց կեանք ձեր աշխարհ:  
 Որ տեսնենք ինչ կայ, ինչ չը կայ այստեղ:  
 Իսկ եթէ կուզէք ասեմ աւելին—

(Յջց տալով դէպի Մասիսը)

Ահա իսկական մեր նըպատակը:

Վանահայր. Մասիսը?

Պարբօտ. Այո՛,

Այս Արարատեան դաշտի կոթողը,  
 Որ Աստուած ընտրեց, իբրև մարդկութեան  
 Առաջին օրրան: Գիտութեան համար  
 Նա մինչև այսօր ծածկւած էր մըթին  
 Անյայտութեան մէջ. դարերից ի վեր  
 Ոչ մի հողեղէն դեռ չէ յանդրդնել  
 Մերձենալ լերան վերամբարձ ծայրին.  
 Մենք կամենում ենք բարձրանալ այնտեղ...

Վանահայր. Բարձրանալ այնտեղ? (Եպիտով  
 և թերահաւատութեամբ շարժում է գլուխը):

Պարբօտ. Այո՛, բարձրանալ և ջինջ բար-  
 ձունքից

Նայել աշխարհին և ըսքանչանալ

Արարչապետի ստեղծագործութեամբ.  
 Եւ մի հայեացքով ընդգրկել երկրի  
 Այնպիսի անհուն մի տարածութիւն,  
 Որքան մարդու աչք կարող է կտրել:  
 Վանահայր. Եւ զըբա համար այդչափ նե-  
 ղութիւն?...  
 Պարբօտ. Ի՞նչ, չ'արժէք, հայր սուրբ? Բայց  
 մեր աշխարհում;

Պիտի իմանաք, մարդիկ սիրում են  
 Եւ զիտեն յարգել բնութեան արտակարգ  
 Տեսարանները... Բայց այդ չէ բանը:  
 Այս հրսկայ սարի յատկութիւնները,  
 Որ շահեկան են գիտութեան համար,  
 Մենք մըտադիր ենք ուսումնասիրել  
 Ստորօտիցը մինչև զազաթը.  
 Զանգուածի կազմը, մըթնոլորդային  
 Երևոյթները, նրա բարձրութիւնը...

Վանահայր. Տայ Աստուած ձեզ ոյժ և կա-  
 րողութիւն

հասնել ցանկալի ձեր նըպատակին:  
 Բայց ո՞ւր է խիզախ այն մահկանացուն,  
 Որ համարձակէր ոտ կոխել այնտեղ,  
 Սըրբազան լերան երկնածէմ զըլսին,  
 Ուր մինչև անդամ թևաւորները  
 Կորոյն թափով չեն զօրում երբէք

Թռիչներն ուղղել այնքան վերամբարձ:  
Ոչ, զուր, ապարդիւն կ'անցնեն մարդկային  
Սմենայն ջանքեր:

Եղէք մի այժեամ, որ ճարպիկաբար  
Գիտէ յատկրաւ ժայռից դէպի ժայռ,  
Ի՞նչ շահ, երբ ամեն մի քայլափոխում  
Բացում են մարդու աչքերի առաջ  
Սկստակ զոռ վիճ, պատառւածք, ժայ-  
ռեր,

Սյնչափ անուելի, սեպածև և թեք,  
Որ միայն տեսքիցն արիւն է սառչում,  
Սարսրում հողի... Եւ այդ է միայն?  
Իսկ յճուրտը, բճուր, թճնր, տարափր,  
Ճայթմունքն անեղ փոթորիկների...  
Իսկ ձեան հիւտերը, որ դիտեն փրթել  
Ջօրեղ թընդիւնով? Իսկ սահեցմունքը  
Սառցակոյտերի? Քարերի վիժմունքն,  
Սպառաժներից փրլած բեկորներն,  
Որոնց մի հասիկ միայն կրտորը  
Լիովին բաւ է, որ ամբողջ քարւան,  
Մըրջիւնների պէս, իր տակ ջախջախի!...

Պարբօտ. Ես հաւատում եմ, հայր սուրբ,  
վերելքը

կապած է անթիւ դրժւարութեանց հետ,  
Բայց մենք կը փորձենք:

Վանահայր. Սուբ Յակոբըն\*) էլ հին ժա-  
մանակում

Փորձեց բարձրանալ լերան գլուխը,  
Որպէս զի այնտեղ իր աչքով տեսնի  
Նոյի տապանը:

✓ Բայց Տիրոջ կամքին հակառակ էր այդ-  
եւ ըսքանեցին Տերունին հազեւ  
Քիչ վեր բարձրացաւ, սաստիկ ծարաւից  
Սկսեց նեղւել և այնպէս յոգնեց,  
Որ միայնգամայն ուժասպառ և թոյլ  
Վայր ընկաւ, թեքեց գլուխը գեանին  
Եւ դառը լացով սկսեց աղօթել...

Աչքերից հոսած արտասուքիցը  
Բրդիւնեց մի աղբիւր, որ մինչև այսօր  
Սրբար Յակոբայ անունն է կրում:  
Երբ որ ծարաւը փարատեց սուրբը,  
Ոյժ առաւ, կրկին վեր կացաւ, զընաց  
Դրժւարամտոյց առապարներով  
Եւ արդէն մօտ էր սարի կատարին,  
Բայց էլ չը կար ոյժ և կարողութիւն  
Իր ճանապարհը շարունակելու:  
Աչքերը կըպան, ու մրտաւ խոր քուն:

\*) Տե՛ս Փաւստոս Գլուզանդացոյ «Պատմու-  
թիւն Հայոց». Վարդութիւն Վ. գլուխ 10. «Յա-  
ղագս Յակոբայ եպիսկոպոսի Մճքնայ»: Լ. յա աւան-  
դութիւնը յայտնի է եղել Լ. բովեանի ժամանակ:

Եւ ահա՛ երազ: Նրեշատկը եկաւ  
 Եւ կոնդնեց սուրբի գրլխավերերւր.  
 Ու ասաց. «Յակոբ, Յակոբ, քո Տէրը  
 Լըսեց քո աղերս և ազաջանքը—  
 Եւ կատարում է, ահա քո մօտ է  
 Տապանի մասը— վերջորձ և զընա՛  
 Եւ ի զուր էլ մի՛ արքնիր տեսնելու  
 Այն, ինչ յաւիտեան Արարչի կամքով  
 Պիտի քնայ անտես»: — Ասացէք Նիմա.  
 Եթէ սուրբ մարդուն արդելեց Ասաւած  
 Մերձենալ սարի գրլխին, օ՛, մի թէ,  
 Մի՞թէ թոյլ կը տայ Նա մեզ, հողեղէն  
 Մեղքերով լեցուն արարածներիս?

Պարբօտ. Զարմանալի է: Այստեղ ամենքը  
 Ասում են նոյնը. «անկարելի է»,  
 «Անհրնարի՛ն է»: Եւ չը կայ մէկը,  
 Որ մեզ յուսադրէր: Սկսած հայր սուրբից  
 Մինչև գիւղերի վերջին ռամիկը  
 Ահով ու գողոյ յորդորում են մեզ  
 Թողնել վերելքի մեր «անմիա» փորձը:  
 «Անկարելի է, անհրնարի՛ն է!»  
 Զորս կողմից հրնչում է միաբերան:  
 Եւ մի դարաւոր նախապաշարում  
 Մինչ որ աստիճան կարողացել է  
 Կապել, կաշկանդել մարդկային միաքը  
 Եւ մտածմունքը! Կարծես ամենքի

Պաշտամունքն է — «չը շարժւել տեղից,  
 Քայլ առաջ չ'երթալ, քայլ առաջ չ'անել  
 Դէպի վեր, դէպի լուսոյ աշխարհը!»  
 Բայց գիտութիւնը, որ մեծազօր է,  
 Պիտի բայ անէ իր ճանապարհը.  
 Նըրա նորոգիչ ճառագայթները  
 Պիտի թափ անցնեն աշխարհի մթին,  
 Խուլ անկիւնները, և խաւարի մէջ  
 Լոյս պիտի շողայ!  
 Երկնահուպ լերանց կուսական բարձունք,  
 Խորունկ յատակըն ու վեանոսների,  
 Երկինքըն անթիւ լուսատուներով—  
 Ամբողջ աիեղերք — իրանց դաղանիքը  
 Բոլորը պիտի երևան հանեն  
 Գիտութեան առաջ!  
 Քաղցրը է նոյն իսկ դառնազին մահը  
 Յանուն նորանոր յայտնադործութեանց  
 Որոնտմների... Նեռու ուրեմն  
 Վէհերկոտութիւն և մահւան երկիւղ.  
 Քաջարի լինինք, ուղեկիցներըս,  
 Լարենք մեր կամքը, բարձրանանք վերև  
 Եւ առաջինը բոլոր մարդկանց մէջ  
 Մեր ոտը դրնենք հըսկայ Մասիսի  
 Վէհապանձ գրլխին!

Շիման. Եղանակըն էլ նրպատուոր է.  
 Երկինքը մաքուր և զգր խաղաղք

26446



Բեհագէլ. Պատեն վայրկեան է—և պիտի  
օգտուել:

Պարբօտ. Այո՛, շուտ քրնէնք, որ առաւօտը  
Կանուխ, դեռ ևս արև չը ծագած,  
Շարժւենք դէպի վեր:

Աբովեան. Ես էլ կուղէի ձեզ հետ բարձրանալ:

Պարբօտ. Դուք անսովոր էք նեղութիւնների  
Եւ շուտ կարող էք վեհատել: Թողէ՛ք,  
Որ ես մի երկու ընկերակցի հետ  
Նախնական մի փորձ կատարեմ, յետոյ—  
Մեզ հետ՝ դէպի վեր: Հայր սուրբ, կը  
խրնդրեմ

Մեզ առաջնորդէք մեր օթեանը:

(Ս անհայրը առջ է ընկնում. նրա ետեւից  
գնում են բոլորերեան, բացի Աբովեանից):

Աբովեան. Իսկ ես մինչև այդ  
Մի հինգ-վեց կանգուն բարձրութեամբ  
փայտէ

Սև խաչ կը շինեմ, կը տանեմ հետքս

Մինչև գազաթը, այնտեղ, վերևում

Կառուցանելու, իբրև յիշատակ

Մեր վըտանգաւոր վերադնացութեան:

Իսկ թէ չը հասանք մեր նըպատակին,

Եւ ինձ խորխորատ ընդունեց իր մէջ,

Այն ժամանակ, է՛հ, թո՛ղ գերզմանիս

Սև խաչը լինի: (Վալիս է վանհայրը):

ՎԱՆԱՀԱՅՐ, ԱԲՈՎԵԱՆ:

Վանահայր. Իբրև քրիստոնեայ, ես քեզ ա-  
սումեմ,

Եղբայր, չը լինի այդ քայլըն անես:

Հակառակ դէպքում, զիտցիր, կը կորչես  
Անհետ, անհաղորդ և անյիշատակ:

Աբովեան. Կեանքումս, հայր սուրբ, առա-  
ջին անգամ

Պատահումեմ ես այնչափ լուսամիտ,  
Կատարեալ անձի, որ նոյն ժամանակ  
Եւ մի ախպար է մարդասիրութեան:

Որքան առողջ միտք և դատողութիւն,  
Ի՛նչ լայն հորիզոն մտածողութեան!

Անվէհեր, տոկուն և հաստատակամ—

Ահա բընութիւն, որ ինձ գերել է.

Նա ինձ քարշում է իր ետեւիցը

Մաղնիսի նրման. և ես պատրաստ եմ

Նըրան հետեւել, որպէս իր սուեր

Կամ որպէս մի կոյր՝ իր առաջնորդին,

Այո՛, հետեւել, ուր որ էլ զընայ

Եւ որքան բարձր կամենայ տանել:

Վանահայր. Իմ պարտքըս էր քեզ ըզգու-  
շացընել,

Իսկ մնացածը— դու զիտես, եղբայր:

Ես զընամ այժմ. իմ աղօթելու  
ժամին է արդէն:

Աբովեան. Ես էլ կուզէի ձեզ հետ աղօթել:  
Վանահայր. Երթանք միասին: (Անահայրը  
է Մբովեանը գնում են: Գաւթից դուրս են  
գալիս 1 և 2 գիւղացիները):

1 և 2 ԳԻԻՂԱՅԻ:

1— Գիւղացի. Մարդ հեռու տեղեց վեր կե-  
նայ ու դայ,

Թէ ինչ է— պիտի Մասիսը տեսնեմ,

Սարի գրլուխը պիտի վեր ելնեմ:

Սա ինչ խելք է, հնա՞, դու ասա՛, չեթում?

2— Գիւղացի. Ես ինչ իմանամ. քամի է փը-  
չել...

1— Գիւղացի. Ի՞նչ կը բարձրանան:

2— Գիւղացի. Մեր ինչ պէտքերն է: Մերն է  
ստանալ

Մեր օրավարձը:

1— Գիւղացի. Ախր ի՞նչ խելք է, մի ասա՛,  
տեսնեմ:

2— Գիւղացի. Իրանց հարցըրո՞ւ:

1— Գիւղացի. Կարելի բան է, որ մարդ իր  
օրում

հասնի այն ծայրին?

2— Գիւղացի. Կարելի լինէր, որսորդ Սա-  
հակը

Ամենից առաջ կը հասնէր այնտեղ:  
Բայց նա ասում է, որ հընար չը կայ:

Կամ կը գրլորուիս, ասում էր, անդունդ՝  
Ջարդ-փրշուր եղած, կամ եթէ անդունդ

Չը գրլորուցիր, բուք ու բորանը  
Ձիւնաթաղ կ'անի. թէ բուք-բորանը

Ձիւնաթաղ չ'արաւ, սառոյցների մէջ  
Կը սառչես կը մնաս:

Ահա քեզ որսորդ Սահակի խօսքը:

1— Գիւղացի. Է՛հ, այդ է մենակ? Չե՞ս լը-  
սել, Կարօն,

Գիւղի հովիւը, ինչէր է պատմում  
Սարի քաջքերից?

2— Գիւղացի. Գիտեմ, լըսել եմ, ինձ էլ  
պատմել է:

(Գալիս է Մբովեանը):

Աբովեան. Չըրոյց էք անում, դեղձուկ եղ-  
բայրներ?

1— Գիւղացի. Հա, խօսք էր բացել քաջքե-  
րի մասին:

Վարժապետ, ճի՞շտ է, որ այդ քաջքերը  
Մի մարդ տեսնելիս, շան պէս օռնում են,

Քամակից վազում, քարափի գրլիսից  
Գրլորում են ցած:

Աբովեան. Առասպելներ են:

1— Գիւղացի. Բայց մեր հովիւը, Կարօն, տեսել է

Քանիցրս անգամ: Նրբան («խըփել են»):

Աբովեան. Առասպելներ են, ես ձեզ ասում եմ:

Եւ մի' հաւատաք:

2- Գիւղացի. հապա չէ՞ որ դու, վարժապետ, հէնց նոր,

երբ դալիս էինք, պատմեցիր ծամբին,

Որ Արտաւազդին քաջքերը տարել

Ձրգել են մըթին խորխորատի մէջ՝

Շրջլծայ են զրոել նըրա ոտներին,

Եւ մինչև այսօր նա դեռ այնտեղ է,

Միրար լի մաղձով, լի մեծ չարութեամբ.

Ու շնորհն էլ, դու ասում էիր,

Մնվերջ կրթում են նըրա կապանքը,

Որ մաշեն շրջլծան, աղատեն տիրոջ,

Ու նա լոյս-աշխարհ կարենայ տեսնել....

Աբովեան. Ես ձեզ պատմեցի, իբրև առասպել:

Բայց ոչ թէ իբրև մի եղելութիւն:

Ախ, եթէ կ'ուզէք ուղիղն ասեմ,

Մենք էլ ազգովին մի Արտաւազդ ենք,

Կաշկանդաւած մըթին խորխորատի մէջ,

Սըրաներրս լի չարութեամբ, մաղձով,

MB

Բայց կաշկանդաւած ենք ոչ թէ շրջլծայով,

Սյլ արգիտութեամբ և հազար ու մէկ

Առասպելներով, որ մեզ ճընշում են

Եւ մեզ չեն թողնում, որ ձրգտենք վերև

Կատարելութեան աստիճաններով

Իէպի լոյս-աշխարհ, կենսատու արև...

1— Գիւղացի. Վարժապետ, գիւղում երեսի վըրայ

Թողել ենք տուն տեղ, ընտանիք, տաւար,

Ու ձեր ետեից ընկել եկել ենք:

Ի՞նչ կը լինի, որ աւելայցընէք

Մեր օրավարձը?

Աբովեան. Աւելորդ խօսքեր. մենք պայման ունինք:

2— Գիւղացի. հօ ձեր գըրպանից չը պիտի դուս դայ?

Աբովեան (բարկացած). Լըռեցէ՛ք, խընդրեմ! Ձը լինի թէ դուք

Նրբանց մօտ բերան բանաք այդ մասին!

Ձեր տեղ ամօթից դետին կը մըտնեմ:—

Դուք կամենում էք մեզ նեղը ձրգել

Մի քանի կոպէկ աւելի կորզել?

1— Գիւղացի. Է՛հ, լու, վարժապետ, էլ մի բարկանար.

Մենք չենք պահանջում: մենք խընդրում էինք:

Աբովեան. Եւ ոչ իսկ խրնդերը — Լրսեցէք.  
վաղը

Պարբօտը պիտի ճանապարհ ընկնէ:

Իուք պիտի զարթնէք համարեա մը [Թնով.

Սյնպէս որ, երբ նա կամենայ մեկնել,

Իուք արդէն լաւ կազմեւ պատրաստ լինիք:

1— Գիւղացի. Մեր աչքի վըրայ:

2— Գիւղացի. Միամիտ կացէք:

(Մբովեանը գնում է)

### ՏԵՍԱՐԱՆ Բ.

Մասիսի վրայ: Սպառաժուտ տեղ, որի երկու կողմից բարձրանում են սեպածե ժայռեր. իսկ աւելի վեր մի նոր բարձրումիւն, որի ետեւից երևում է լեռան ձիւնապատ գագաթը: Օրը տարածւում է, թեթեւ քամի, որը գնալով աւելի և աւելի սաստկանում է: Մի ժայռի վրայ երևում է Պարբօտը՝ սկզբում միայն զլուխը և իրանը, յետոյ ամբողջովին: Ձեռքին ունի մի սրածայր ալպան գաւազան, հազած է երկաթե փշատը կողիկներ:

Պարբօտ. հազիւ բարձրացայ: Սկսած Բիվ-  
Գէօլից

Եւ մինչև այստեղ ի՛նչ սարսափելի

Առապարներ են... Ես լաւ յոգնեցի:

(Նայում է ցած):

Շիման, Բեհագէլ. Եկէ՛ք այս կողմով:

Բայց ըզզո՛յշ... ո՛չ ո՛չ այդ տեղից հեռո՛ւ!

Ժայռի այդ մասը կարծես փրջում է:

Սպասեցէ՛ք, կացէ՛ք, չը շարժէ՛ք տեղից!

Տըէ՛ք ձեր ձեռքը... (Շիմանը բարձրա-  
նում է):

Դէ՛հ, հիմա ձերը, Բեհագէլը այդպէս:

(Բարձրանում է Բեհագէլը) Կեցցէ՛ք, իմ քա-  
ջէ՛ր:

Բեհագէլ. Օ, դրժոխային ճանապարհներ են!

Շիման. Աւելի վատթար:

Բեհագէլ. Չը լինէր արդոյ ուսուցչապետը,

Կարը՝ ոտով-դրըխով դու կորած էիր:

Շիման. Սյո՛, նա պահեց: Գրնդակի նրման

Գըլըրում էիր... (Նստում է մի թնդիւն):

Պարբօտ. Սյս ինչ թընդիւն էր? Սյն կողմից  
էկաւ:

Ուր մընացին մեր ուղեկիցները?

Լրսեցի՛ք — մէկը կանչեց «օղնու [Թիւն]»?

Սա երիտասարդ հայի ձայնն էր...

Չը լինի նրան փորձանք պատահեց.

Շտապէ՛նք առաջ, զընա՛նք օղնու [Թեան]:

(Մի բոպէ անհետանում են ժայռի ետեւ քիչ յետոյ երևում են Մբովեանի հետ, որի ձեռքին կայ մի փայտէ սե խաչ հինգ կանգուն բարձրու [Թեամբ]):

Պարբօտ. Ի՛նչ դունատուած էք... Սյն ձեր  
ձայնը չէր?

Եւ ինչ բան թընդաց?

Աբովեան. Իսկոյն կը պատմեմ... Շունչըս  
Հատնումէ...

Պարրօտ. Դեռ հարկաւոր չէ. նախ հանգրս-  
տացէ՛ք:

Աբովեան. Ինչպէ՛ս վախեցայ, ասել չեմ կա-  
րող:

Շիման. Գուցէ վայր ընկաք և գըլորւեցիք?

Աբովեան. Ես կանգնած էի մի ժայռի վըրայ,  
Որը կից է այս բարձրավանդակին.

Նրրա գըլուխը թեքած է սակաւ  
Դէպի մութ անդունդ, կազմելով հանգերձ

Մի զարհուրելի գահավէժ... Ուղիղ  
Այն բողբոջին, երբ ես խաչը դրի

Նրրա մի ծայրին, որ ամուր յենւած՝  
Այստեղ բարձրանամ, ժայռից ուժգնապէս

Մի բեկոր փրթաւ և որոտածայն  
Գահավիժեց յած այնպիսի թափով,

Որ խոր ձորերը արձագանքեցին...  
Սեւցան աչքերս անհից ու դողից,

Եւ միտքըս ցընդեց... Ինձ թըլում էր, որ  
Իմ պատւանդանը տեղից շարժում է

Եւ քարաժայռի բեկորների հետ  
Ես պիտի անցնեմ անցատակ վիհը...

Մահւան սարսուռ էր պատել իմ հոգուն,  
Եւ ատամներս կափկափում էին...

Սակայն ինձ Աստուած խընայեց, և ես  
Հըրաշքով պըրծայ սոսկալի մահից.

Պարրօտ. Բայց ինչու չ'եկաք մեր եկած  
Ճամբով?

Աբովեան. Ես ձեզ աչքիցըս կորցրի մի պահ  
Եւ կարծում էի, որ ես դալիս եմ

Ձեր ճանապարհով:

Պարրօտ. Իսկ միւսները—նըրանք ինչ եղան?

Աբովեան. Գիւղացիներից երկուսին թողի  
Քարափի տակին. վախենում էին

Եւ ասում, որ էլ աւելի վերև

Չ'արժէ բարձրանալ, որ իրանց գըլիսից  
Ձեռ չեն վերցըրել. «Կըրկնապատկեցէ՛ք

Մեր օրավարձը—գարձեալ մի հատ քայլ  
Առաջ չենք գընիր». ու ես գընացին:

Շիման. Փոքրողի մարդիկ:

Բեհագէլ. Ասիացիներ:

Աբովեան. Իսկ միւսներից տեղեակ չեմ ոչինչ:  
(Այդ ժամանակ երևում են և միւսները, բացի  
մի քանիսից):

Պարրօտ. Ահա և յարգոյ մեր աստղաբաշխը  
Եւ միւս սըրտոտ ուղեկիցները:

Կեցցէ՛ք բոլորը!

Աստղաբաշխ. Կարծեմ, ամենից դըժւարա-  
մատոյց

Եւ վըտանդաւոր տեղերըն անցանք:



Պարբօտ. Այս բըրբի էակ կը սկսւի արդէն

Մըշտընջենաւոր ձիւնի սահմանը  
եւ աւելի վեր—սառցակոյտերի  
Թագաւորութիւն:

Ձը կարծէք սակայն, որ այսուհետեւ  
Աւելի դիւրին կը լինի ձամբան:  
Ես վեր էլած եմ Սյպեան սարերի  
Բարձրաբերձ Մոն-Ռոզ\*) լեռնազագաթը  
եւ Մալազե'տտան Պիրինէի մէջ,  
եւ քաջ զիտեմ ես, թէ ի՛նչ ասել է  
Մաքառել սողոսկ սառցակոյտերի  
եւ փըխրուն ձեան հետ: Բայց նախ կու-  
ղէի

Իմանալ, արդեօք ո՞վքեր ձեզանից  
Ունին կամք և ոյժ շարունակելու.  
եւ ով վըճատեց ու կամենում է  
Վերագառնալ ետ?

Շ Իման. Յամենայն դէպս, դէ՛թ այս երեկոյ  
էլ հընար չը կայ շարունակելու:  
Մեզ պէտք է հանդիստ և պատըսպարան:  
Արևը մըտաւ.  
Քամին զընալով սաստրկանում է,  
եւ կամաց կամաց կիտւում են ամպեր...

\*) Մոն-Ռոզի վերելքը—1816 թ., իսկ Մա-  
լազետայինը—1823 թ.

Բեհագէլը. Եւ ի՛նչպէս ցուրտ է: Ես դողդո-  
ղում եմ:

Պարբօտ. Լաւ փաթաթւեցէ՛ք: (Նբովեանին)  
Իսկ դուք, բարեկամ?

Աբովեան. Խիստ սուր է քամին, ոսկոր է  
մըտնում:

Բայց ինձ աւելի ծարաւն է տանջում:

Պարբօտ. Այն մաքուր ձիւնը ջըրի տեղ կը  
տայ:

Միայն չը մըրսէք:—Շատ հեռու զընալ  
էլ անկարող ենք: Մութըն ընկնում է,  
Չորս կողմից անսանձ փըջում են հողմեր,  
եւ թըխպերը խուլ որոտումներով  
Ծածկում են լեռուր: ✓✓

Ա. ս ա ղ ա բ ա շ խ. Բայց ի՛նչ անսովոր մի տե-  
սարան է—

Նայեցէ՛ք—վերև երկինքը պայծառ,  
Իսկ մեր ոտից տակ, ներքև—փոթորիկ:

Պարբօտ. Ո՛ւմ մըտքով կ'անցնէր, որ առա-  
ւօտեան

Այն մեղմ և ժըպտուն արեւից յետոյ  
Երեկոյեան դէմ ամբողջ բընութիւն  
Մինչ այս աստիճան պիտի խառնըւէր...  
Բայց մենք ըշտապենք: Սա լաւ կայան չէ:  
Մեզ հարկաւոր է շուտով որոնել  
Աւելի ամփոփ մի պատըսպարան:

Սմայերը, տեսէ՛ք, արդէն մօտեցան.  
 Յանկարծ կը կըտրեն մեր ճանապարհը,  
 Եւ այն ժամանակ անհրճաբն է  
 Մեզ մի քայլ անել՝  
 Ոչ վար և ոչ վեր, ոչ աջ և ոչ ձախ:

(Պարբօտը և աստղաբաշխը հեռանում են պատսպարեցող տեղ որոնելու):

Շիման. Բեհագէյ, ինչու այդպէս արևրել ես  
 Եւ կուչ ես եկել? Արդեօք ցըրտից է  
 Թէ վախենալուց?

Բեհագէյ. Երկուսիցըն էլ: Վատ տեղ մը թնայցրինք:

Կորած ենք, եղբայր: Ես էլ յոյս չունիմ,  
 Որ մենք այս դիշեր կը լուսացընենք:  
 Ինչ յիմարութիւն... Ինչպէս զըզջում եմ,  
 Որ ձեզ հետ եկայ... Բայց եթէ միայն  
 Վիճակած է մեզ վաղն արև տեսնել,  
 Երգում եմ, իսկոյն պիտի վեր կենամ  
 Եւ ուղիղ — դէպի Յակոբայ վանքը:

Շիման. Երևի, ես էլ կ'ընկերանամ քեզ:  
 (Պարբօտը և աստղաբաշխը գալիս են):

Պարբօտ. Դէ, բարեկեաներ, շտապէ՛նք վերև —

Այստեղից մօտ է: Մի խումբ ժայռեր են,  
 Որոնց մայրերըն իրար մերձ ու կից՝  
 Կազմել են մի բուրդ՝ զըմբէթի նըման:

Այնտեղ կ'ունենանք մենք մի փռաւոր  
 Քարակոփ դահլիճ: Կը հանգըստանանք,  
 Դիշերը կ'անցնի,  
 Նորից կը փայլի պայծառ արևը,  
 Եւ մենք կազդուրած, նորոզած յոժով  
 Կը շարունակենք մեր ճանապարհը:  
 Վեր կացէք, իմ քաջ ուղեկիցնէրս.  
 Պէտք չէ վընատել. վընատութիւնը  
 Միայն թոյլերի յատկանիշն է:  
 Դէ, արիացէ՛ք, և առաջ ինձ հետ!

Ա. բո՛վեան. Ախ, մի կաթիլ ջուր... Ես պապակում եմ

Տանջող ծարաւից:

Պարբօտ. Եռտով ծարաւդ կը յագեցընենք:  
 (Քամին բոլոր ուժով շառաչում է: Սմայերը գալիս ծածկում են նրբանց, էլ չեն երևում: Միայն լսում է հեռուց Պարբօտի ձայնը):

Պարբօտ. Բարեկամներս, սրբտապընդւեցէ՛ք.

Մընաց միայն մէկ փօքրիկ զառիվեր —  
 Առաջ, դէպի վեր:

### ՏԵՍԱՐԱՆ Գ.

Ս. Յակոբայ վանի գաւթնը: Առաւօր:

Վանահայրը խօսում է վանքի հովիհ հետ, որը կանգնած է ոչխարների հօտի մօտ՝ հովական մահակը ուսին դրած:

Վանահայր. է՛հ, գընս, Կալօ՛, տա՛ր արածերու:

Բայց երեկայ պէս էլ մըթնով չ'ընկնես: Իրիկնադէմին, երբ որ վանքը դաս, Տէս, որ արևի վերջին շողերը Գեռ սարի գըրխից անցած չը լինին:

Հոփիւ. Ես խամ չեմ, հայր սուրբ: Հող մ'ըներ: Ի՛նչ կայ?

Ումնից ան քաշեմ—քիւրտից թէ զիլուց? Երկուքն էլ էս էրկան մըհակիս Բանի խեռ ասեմ ուժը տեսեր են: Խս, միամիտ կայ:—է՛հ, հէ՛, հէ՛, բը՛ռռ, հօ՛....

(Մտալ է քշում ոչխարներին: Վանահայրը մնում է մենակ):

Վանահայր. Չ'եկան, ուշացան, սիրաս հանդիստ չէ... Տէր բաղումողորմ, գըթա՛ւ և ների՛ր

Դու նըրանց անլուր խիզախութիւնը. Գանդի ոչ գիտեն, թէ զինչ գործեն: Տէր, Փըրկեա՛ ի չարէ և ի փորձանայ: (Վալիս է Մբովեանը, փայլելով ուրախութիւնից): Ս.բ.օ.վեան. Եընորհաւորի՛ր, հայր սուրբ, մենք հասանք

Մեր նըպատակին. ես համբուրեցի Սըրբազան լերան մաքուր ձակատը: Վանահայր. Սյդ ինչ է, եղբայր? Երեսըդ ուռած, Եըրթունքըդ կապտած: Դու հօ չես ընկել?

Ս.բ.օ.վեան. Սյդ ոչինչ, հայր սուրբ. բայց ցաւըն այն է,

Որ ես համարեա ոչինչ չեմ տեսնում: Սյնքան առատ է այնտեղի լոյսը, Որ այստեղ շուրջըս խաւար է թըլում: Վանահայր. Դու բոլորովին փոխւած ես աչքիս.

Կարծես աշխարհի տէրըն ես դարձել. Սյնպէս ցընձում ես... Եւ որքան հըպարա Ու համարձակ է հընչում քո ձայնը! Ուր թողի՛ր քո հեղ և խոնարհ հողին?

Ս.բ.օ.վեան. Օ՛, հեռու ինձնից հըպարտութիւնը!

Բայց բոլոր հողով ես վերացած եմ:

Եւ սիրարս ի՜նչպէս վեր վեր է թրոչում  
 Այն բոլորից յես, ինչ որ ես տեսայ  
 Այնտեղ, Ասարծոյ զահոյքի առաջ!  
 Վանահայր. (կատակով). Ահա նոր Մովսէս  
 (Որ Սինայ լեւան ամպերում կորաւ  
 Եւ փոթորկային որոսմունքի մէջ  
 Իջաւ աշխարհը նոր պատգամներով...  
 Նոր պատգամ չ'ունիս մեզ հաղորդելու?  
 Ա.բ.ո.վ.ե.ան. Ա.խ, հայր սուրբ, զիտե՞ս, թէ  
 ինչ ասել է

Ամենազրժւար առապարներով  
 Բարձրանալ վերեւ վիթխարի լեռոր՝  
 Ամենայն վայրկեան մահըն առաջիդ,  
 Ընկնել ժայռերի խորխորանների  
 Լաբիրինթոսը, մագըրլցել ժայռեր,  
 Ոսնատեղ բանալ կարծր և սողոսկ  
 Սառնապատի վրայ, ձիւնաշեղջի մէջ.  
 Սրբաազոդ անցնիլ անդունդի եզրով,  
 Մաքառել բուքի և հողմերի դէմ,  
 Կորչել թանձրամաճ մտռախտուղի մէջ,  
 Տեսնել իր չորս կողմ խռոնւած բնու-  
 թեան

Մի տարերային սոսկալի խաօս,—  
 Եւ այսուհանդերձ անվճռաա դիմել  
 Միշտ վեր, դէպի վեր և վերջ ի վերջոյ  
 Հասնել վեհապանծ սարի կատարին,

Ու կանգնել այնտեղ օրւայ անարատ  
 Պայծառութեան մէջ, և ըզզալ հողով,  
 Որ այդ վայրկեանին բարձր ես կանգնած  
 Աշխարհի բոլոր արարածներից, (sic.)  
 Եւ որ մինչև իսկ հրգոր արծիւը  
 Ձէ կարող հասնել այն գոռ բարձրութեան,  
 Որին դու հասար,—  
 Օ, դա այնպիսի երջանկութիւն է,  
 Որի համար մեզ արժէ նախանձել,  
 Եւ մի այնպիսի քաջագործութիւն,  
 Որ հաւասար է փայլուն յաղթութեան!  
 Վանահայր. Եւ դու կարծում'ես, որ հա-  
 ւատացի?  
 Ա.բ.ո.վ.ե.ան. Եւ ի՜նչ տեսարան բացւեց մեր  
 առջև...

Մի սովորական բընութիւն չէր այն,  
 Այլ գերահանձար Արարչագործի  
 Հըսկայ վըրձինով համարձակ քաշած  
 Վիթխարի և վեհ մի գեղանրկար  
 Մի անձայրածիր հորիզոնի տակ!  
 Շաա հեռու, ամպի կրտորների պէս,  
 Դէպի կապուտակ երկինքն ամբարձած,  
 Նըշմարւում էին էլբրուս և Կազբէկ.  
 Իսկ աւելի մօտ՝ Գեղամայ լիճը  
 Թագնւած եզերքի սարերի ետև  
 Եւ կոյսի նըման մի աջի ծայրով

Ծրկախ էր տալիս արեգակի տակ.  
 Այն կողմ Սեալան, Սիփան սարերը  
 Եւ քանի՛ քանի՛ լեռնաշղթաներ  
 Ընկած էին մեր աչքերի առջև,  
 Կարծես ծովի զոռ ալիքներ էին՝  
 Մի ակրնթարթում յանկարծ քարոյցած:  
 Բայց այս բոլորը դեռ պարզ չէր այնքան,  
 Որքան Արագած և Արագածոտն  
 Եւ Արարատեան ամբողջ դաշտավայր  
 Իր շէն զիւղերով և աւաններով,  
 Իր կանաչազարդ այգեստաններով,  
 Որ նրման էին ուլազիսների՝  
 Յրբւած ընդարձակ անապատի մէջ...  
 Եւ ի՞նչ սիրուն էր նաև Արաքսի  
 Ոլորապլտոյտ, հեռու հոսանքը,  
 Որ մերթ փայլում էր ազատութեան մէջ,  
 Մերթ անհետանում անձուկ կիրճերում:  
 Ո՛հ, ի՞նչ անպատում հոգեղմայլութեամբ  
 Լըցւում էր սիրտըս, երբ նայում էի—  
 Ներքև՝ Աստրճոյ սքանչելի աշխարհ՝  
 Պրճնւած աննրման մի դեղեցկութեամբ,  
 Իսկ վերև՝ խորին երկնականմարը՝  
 Ծաւալւած այնչափ անսահման, անվերջ,  
 Որ մինչև անգամ մեր խիզախ միտքը  
 Յընդում էր նրբա անհունութեան մէջ...

Հայր սուրբ, ձեր կեանքում, ոչ մի օր,  
 երբէք  
 Տեսած չէք լինիլ այնքան փառահեղ  
 Եւ հանդիսաւոր մի խաղաղութիւն,  
 Որպիսին այնտեղ, վերև էր տիրում:  
 Բացի սեփական շընչառութիւնից,  
 Ուրիշ ոչ մի ձայն և ոչ մի շըշուկ!...  
 Վանահայր. Իսկ ինձ չը տեսար լերան դա-  
 դաթից?  
 Աբովեան. Օ, այնտեղից մարդ մը թուկ է  
 թըլում:

(Վստում են ուրախ ձայներ).  
 Վանահայր. Այս ինչ աղմուկ է?  
 Աբովեան. Դիմաւորում են ուսուցչապետին  
 Եւ նրբա աջող վերելքի համար  
 Ազգազակում են. «կեցցէ՛ Պարբօր!»  
 (Նըրևում են Պարբօրը, Շ իման, Ինհագէլ աստ-  
 ղաբաշխը և միւսները):

Պարբօր. Ողջոյն ձեզ, հայր սուրբ: Մենք  
 սուրբ Յակօբից  
 Բողբաւոր էինք, և հասանք այնտեղ  
 Եւ ձեր այս սըրտոտ հայրենակիցը  
 Իր խաչը տընկեց դագաթի վըայ \*)—  
 Սառցակոյտի մէջ:

\*) Աբովեանը իր հետ վերցրած հինգ կանգուն բարձրութեամբ փայտէ սև խաչը տնկեց Մախիսի դագաթին:

Աբովեան. Բայց նա, հայր սուրբը, դեռ չէ  
հաւատում:

Պարբօտ. Որ մենք բարձրացանք մինչև գա-  
զաթը?

Աբովեան. Սյո՛, գընում է, որ անհրճար է:  
Վանահայր. Սյոխնքն, մինչև ձիւնի սահմանը  
Գուցէ դեռ մի կերպ կարելի լինի.

Բայց աւելի վեր—անհրճարին է:

Պարբօտ. Ո՛չ հայր սուրբ, բարձր, մինչև  
կատարը...

Շիման. Ես հաւատում եմ և սրբո՛ւի խորքից

Գոչում եմ: «vivat ուսուցչապետը  
Իր ուղեկցի հետ!... (Շ առերը կրկնում են):

Մենք երկու անգամ փորձեցինք յաղթել

Սյս մեծ հըսկային, և երկու անգամ

Ապարդիւն անցան մեր բոլոր ջանքեր,

Եւ մենք, թոյլերըս, ետ նահանջեցինք:

Բայց անհաւաստի այս երբորդ անգամ

հըսկան մեղմացաւ, հըպարտ գըլուխը

Խոնարհեց անա այս երկու ընտրեալ

Քաջերի առջև և հիւրընկալեց:

Եկէ՛ք ուրեմն մեծ ուրախութեամբ

Տօնենք այսօրւայ մեր հերոսների

Փառաւոր գործը և յաղթանակը:

Բեհագէլ. Սյո՛, մի խընճոյք, եթէ հայր  
սուրբը

Թոյլ տայ մեզ—այգում, կանաչի վըրայ:  
Վանահայր. Գընացէ՛ք, եղբարք, և կատա-  
րեցէ՛ք

Ձեր սըրտի իղձը:

Պարբօտ. Բայց ո՛չ առանց ձեզ, հայր սուրբ:  
Ձեզ և ըս

Կը խընդրենք շընորհ բերել պարտեզը,

Օրհնել սեղանը և մեր սեղանին

Մասնակից լինել:

Վանահայր. Հո՛, կըգամ և ես. շընորհա-  
կալ եմ:

Իսկ հիմա երթամ լըրացընելու

Իմ թերի գործը:

Պարբօտ. Ինչ գործ է, հայր սուրբ?

Վանահայր. Սյն, որ դուք տեսաք—ի՛մ գե-  
րեզմանը: (Գնում է):

Պարբօտ. Ա՛խ, ճի՛շտ, հայր սուրբը ինքըն  
իր ձեռքով

հանդերձեալ կեանքի համար շինում է

Յաւիտենական իր օթեանը:

Շիման. Մենք էլ պատրաստենք մեր խըրախ-  
ճանը:

(Գնում է. նրա հետ և միւսները: Սնում են մե-  
նակ Պարբօտը և Աբովեանը):

Պարբօտ. Թոյլ արեւէք կրրկին սեղմեմ ձեր  
ձեռքը

Ի նրչան իմ ջերմ շնորհակալութեան.  
Մի աջակցութիւն ցոյց արեւիք դուք ինձ,  
Որ իմ կեանքումը չեմ մոռանալու:

Աբովեան. Բարի՛ պրոֆէսոր...

Պարբօտ. Ասացէ՛ք:

Աբովեան. Կարծեմ, դուք պիտի մեկնէք?

Պարբօտ. Այո՛, և շուտով: Արդէն վերջացաւ

Մեր ուսումնական առաքելութիւնը:

Ես — կրրկին Գորպատ: Կարգի կը բերեմ

Արարատ լեռան վերաբերութեամբ

Դիտողութիւններս, յետոյ բոլորը

Ի մի ամփոփած՝ ես լոյս կ'ընծայեմ \*)

Ի ծանօթութիւն գիտնականների:

Աբովեան. Ա՛խ, ինչպէ՛ս յայտնեմ ես իմ  
սրբախնր...

Պարբօտ. Դուք, երիտասարդ բարեկամ,  
կարծեմ,

Մի ինչ որ բան էք կամենում ասել,

Բայց վարանում էք?...

\*) Պր. Պարբօտը նկարագրել է իր այս վերելքը և Մասիսի վերաբերմամբ կատարած երկրաբանական և այլ հետազոտութիւնները երկհատոր աշխատութեան մէջ՝ հրատարակած Բերլինում 1834 թ., այն է՝ «Ա՛լ երեւք յԱ՛րարատ» (Reise zum Ararat).

Աբովեան. Այո՛, պաշտելի՛ պրոֆէսոր, իրաւ,  
Ես ունիմ մի իղձ: Հաւատացէ՛ք ինձ.

Երբ մենք բարձրանում էինք սարն ի վեր,

Ջրսի ծարաւը չէր նեղում այնչափ,

Որչափ այսուհետ ես պիտի տանջւիմ

Մի այլ ծարաւից: Դուք, որ ինձ տարաք

Լեռան բարձունքը և ցոյց արեւիք ինձ

Արար-աշխարհի գեղեցկութիւնը,

Այժբմ էլ ձեզ հետ ինձ տարէ՛ք վերե՛

Մինչև գիտութեան այն բարձր կէտը,

Ուր ընդլայնում է մրաքի հորիզոն,

Ուր ազնււանում է մեր բիրտ հոգին,

Եւ մարդ հասնում է կատարելութեան...

Թո՛ղ օրհնւած լինի այն օրն ու ժամը,

Երբ ծանուցելի ես ձեզ: Այն օրից

Մեփական անձիս նըւաստութիւնը

Իմ աչքով տեսայ — և անասելի

Կարօտ բզգացի հոգու և մրաքի  
վերածընութեան...

Պարբօտ. Ես Սսիայի նախադրան շէմքում

Գրաւայ այնպիսի խոշոր աղամանդ,

Որ մի վայրենի պիտի լինէի,

Եթէ ոտի տակ ընկած թողնելով

Այն աղամանդը, ես հեռանայի:

Այո՛, բարեկամ, մեծայոյս եղէ՛ք.  
Խաւարի միջեց ես ձեզ կը տանեմ՝

Դէպի լոյս-աշխարհ, կրօնին դէպի վեր,  
 Դէպի նոր բարձունք, ուսկից կը աւանդ  
 Նորանոր անթիւ գեղեցիութիւններ  
 Հանձարեղ մըտքի և մարդկային վեհ  
 Ստեղծագործութեան:

Ա.բովեան. Ախ, երբ կը հասնեմ այդ եր-  
 ջանկութեան...

Պարբօտ. Այստեղ ապրում է մի հեղ ժողո-  
 վուրդ,

Որի հարազատ զուակրն էք դուք.  
 Նա խորխափում է տրդիտութեան մէջ.  
 Ամեն ինչ թըմրած, ամեն ինչ ծածկւած  
 Հընութեան փոշով. չորս կողմը խաւար  
 Եւ մեռելութիւն, և կեանքը կանգնած,  
 Ինչպէս մի ճահիճ: Այդ ժողովըրդին  
 Լուսաւորութեան առաքեալ է պէտք,  
 Եւ եթէ ճիշտ է վըկայում սիրաբար,  
 Դուք պիտի լինէք այդ առաքեալը:

Ա.բովեան. Ծառայել նրբան անձնը-իրաբար,  
 Որքան կը ներէ աննատի ոյժը,  
 Թըմրած գոյութեան նոր կեանք ներ-  
 շննէր

Նըրա խաւարաչին մըթնուլորդի մէջ  
 Ծաւալել վառ լոյս, կեանքի ջերմու-  
 թիւն —

Ահա իմ իղձը և նրպատակը:

Սակայն ես ինքքս դեռ այնքան անզօր  
 Եւ այնքան թոյլ եմ... Օ, աարէք ձեզ  
 Հեռ

Եւ տարէք, որքան կ'ուզէք, դէպի վեր,  
 Միայն թէ ինձ լոյս, օ, լոյս տըւէք ինձ!

Պարբօտ. Յանկալի լոյսը նաև ձեզ համար  
 Կը փայլի մի օր: Դուք կը գաք Դորպատ,  
 Եւ ձեզ դըրկաբաց կ'ընդունէ իր մէջ  
 Գիտութեան ամառը՝ մեր alma mater.

Ա.բովեան. Երնէ՛կ այն օրին...

Պարբօտ. Այնտեղ կ'ուսանէք և կը զօրանաք  
 Հողով և մըտքով. և վերածընւած  
 Ու պայծառացած գիտութեան լուսով՝  
 Կըրկին հայրենիք կը վերադառնաք, —  
 Եւ այն ժամանակ,

Որպէս փող Գաբրիէլ հրեշտակապետի,  
 Թող բարձրը հընչէ վերածընութեան  
 Փըրկարար խօսքը!... Եւ թող ամբօխը  
 Ըսթափւի՝ քընից, բանայ աչքերը,  
 Եւ՝ ողջունելով կեանքի արշալոյս՝  
 Թող եռանդալից ձեռնամուխ լինի  
 Իր աշխարհաչէն գործունէութեան!.....

Ա.բովեան. Օ, սըրախ խորքից գոչումեմ  
 ամէն!

Պարբօտ. Դուք Ասիայի բոլոր ազգերից  
 Ամենից առաջ երես դարձըրիք

Սոսսպերական ձեր հին կուռքերից,  
 եւ, մինչդեռ ձեր շուրջ, գործից ի վեր,  
 Տիրում էր խաւար յեթանոսական  
 եւ գաղանային բարբարոսութիւն,  
 հետեւեցիք նոր և ընթանչելի

Վարդապետութեան  
 եւ մրկրոսութիւն առաք փրկարար  
 Աւազանի մեջ: — Նոյնպէս և այժմ  
 Հուսաւորութեան ճառագայթները  
 Առաջին անգամ թող այստեղ փայլեն  
 եւ ապա լոյս տան զըրօսցիներին.  
 Թող ծագի այստեղ նոր կեանքի արև,  
 Թող ամենուրեք սրբուհի կրթութիւն  
 եւ կրթութեան հետ աիեղերքի սէր  
 եւ եղբայրութիւն!... Այո, բարեկամ,  
 Ուրախ և անհոգ եղէք. կը լինի: (Սնում է):

Արօվեան. (Սնում է մենակ: Յափշտակած  
 ուսուցչապետի խոստումներով և ապագայի գեղեցիկ  
 հեռանկարով, ծունկ է խոնարհում և ձեռքերը տա-  
 րածում դէպի վեր):

Տէր, իմ ապուէն և հրգօր պաշտպան,  
 Տ՛ւր միտումներիս ցանկալի վսխճան:

Վ Ե Ր Ձ

Քաղու, 1901 թ. դեկտ. 18



ՀՀ Ազգային գրադարան



NL0350363

41.937